Հաշվետվությունը գեներացրած ԵՏ գլխավոր մասնագետ Հ. Հակոբյան
08.12.2023թ.

Փորձաքննության և վերլուծությունների վարչության
գիտական փորձաքննության բաժնի պետ Նաիրա Նազարյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչության գիտական փորձաքննության բաժնում հաշվետու ժամանակահատվածի երրորդ եռամսյակում՝ 2023 թվականի սեպտեմբերի 10-ից դեկտեմբերի 8-ը, մասնակցել եմ բաժնի ընթացիկ աշխատանքներին՝ մրցույթների հրավերների ստուգում, ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳ կոմիտեի առցանց հայտեր և հաշվետվություններ ներկայացնելու համակարգի պայմանների հստակեցում, համակարգի համապատասխանությունը մրցույթի հրավերի պայմաններին, արձանագրությունների և զեկուցագրերի կազմում, պայմանագրերի և համաձայնագրերի ընդունում, այդ թվում.

1. Կազմակերպվել է «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «POSTDOC» ծրագիր 2/2023» մրցույթին ստացված հայտերի գիտական փորձաքննությունը և հարցազրույցի փուլը: Կազմվել է վերոնշյալ մրցույթին ներկայացված հայտերի փորձաքննության և հարցազրույցի գնահատականների նվազման կարգով վարկանիշային ցանկերը, որոնք ներկայացվել են մասնագիտական փորձագիտական խորհրդին: Մասնակցել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանների նախապատրաստման աշխատանքներին, ըստ որի՝ ամփոփվել են «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «POSTDOC» ծրագիր 2/2023» մրցույթի արդյունքները, կազմվել և ԲԿԳԿ Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին է տրամադրվել ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ցանկը՝ համապատասխան տարիների ֆինանսավորման չափաքանակներով՝ ըստ կազմակերպությունների: Ընդունվել են Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական թեմաների իրականացման համար

պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրերը:

2. Մասնակցել եմ «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «POSTDOC» ծրագիր 2024» մրցույթի կազմակերպման աշխատանքներին, մասնավորապես՝ իրականացրել եմ մրցույթի հրավերի փաթեթի և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 14.11.2023թ. N 2369-Ա/2 հրամանի պատրաստում:
3. Մասնակցել եմ «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրում 2024» մրցույթի կազմակերպման աշխատանքներին, մասնավորապես՝ իրականացրել եմ մրցույթի հրավերի փաթեթի և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 14.11.2023թ. N 2363-Ա/2 հրամանի պատրաստում:

Գիտական փորձաքննության
բաժնի փորձագետ Մարինա Տիմոտինա

8 դեկտեմբերի 2023 թ.